ԿԱՐԾԻՔ

ԳԱԳԻԿ ՍԵԴՐԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԳ.00.02 - Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գագիկ Ավետիսյանի «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը առաջին գիտական հետազոտությունն է, որտեղ մանրամասն պարզաբանվել և ներկայացվել է պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում սովորողների գեղարվեստական պատկերային, մտածողական ընկալունակությունների ձևավորումը, որտեղ մանրամասն և պատշաճ ձևով արտահայտված են թե՛ փուլերը, և թե՛ դրանց արդյունքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից: Գլուխներից յուրաքանչյուրն ունի ենթաբաժիններ, որոնք հեշտացնում են նյութի ընթերցանությունն ու ընկալումը:

Ատենախոսության առաջին գլուխն ընդգրկում է գեղարվեստական ընկալունակության ձևավորման տեսական հիմնավորման գործընթացը, գեղարվեստական ընկալունակության ձևավորման կառուցվածքային առանձնահատկությունները, որտեղ առանձնացված են նաև դրանց ազդեցությունն ու առանձնահատկությունները արդի կրթական համակարգերում, ինչպես նաև պատմամշակութային կոթողների կազմության և պատկերագրման հիմնախնդիրը:

Երկրորդ գլխում ընդգրկված է սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորման մեթոդական համակարգի փորձարարական հիմնավորումը, պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացը: Այս գլխում կարևոր եմ համարում փորձարարական աշխատանքի նկարագիրն ու արդյունքների

հավաստիությունը ենթագլուխը, որն իմ կարծիքով աշխատանքի արժեքավոր մասերից է:

Ատենախոսը կատարած աշխատանքի եզրակացություններում ներկայացնում է սովորողների գեղարվեստական ընկալունակության մեթոդական համակարգը, որն ատենախոսության եզրակացության կարևոր կետերից մեկն է, ինչպես նաև եզրակացության վերջում առաջ բերած այն համոզմունքը, որ սովորողների գեղարվեստական ընկալունակության ձևավորումը պատմամշակութային կոթողների պատկերագրման գործընթացում ներառում է նորարարական տեխնոլոգիաների համադրման առաջնահերթ դիրքորոշումը և արտահայտում սովորողների գեղարվեստական արդի կարիքներն ու արժեքային կողմնորոշումները:

Ատենախոսի աշխատությունը ծավալուն և մշակված գիտական աշխատություն է, որն ավարտվում է եզրակացություններով, որտեղ հիմնովին ներկայացված և պարզաբանված է աշխատության գիտական նորույթը:

Աշխատությունը ընթերցվում է ամենայն հետաքրքրությամբ, գրված է սահուն ու ճշգրիտ:

Ատենախոսական աշխատության մեջ օգտագործվել ու ուսումնասիրվել են մի քանի տասնակ գրքեր, կայքեր, հոդվածներ (հայերեն, ռուսերեն, անգլերեն): Իսկ ատենախոսն ունի շուրջ մեկ տասնյակ հրապարակված հոդվածներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ատենախոսը կատարել է ոչ միայն տեսական հետազոտական աշխատանք, այլ նաև կատարել է գիտական փորձեր, որոնց ընթացքը մանրամասն ներկայացված է հետազոտության մեջ: Իսկ ներկայացված հավելվածներն աշխատանքը դարձնում են էլ ավելի հետաքրքիր և արժեքավոր:

Լիարժեք ուսումնասիրելով ատենախոսական այս աշխատությունը և կարծիք կազմելով անհրաժեշտ եմ համարում ներկայացնել մի քանի դիտողություն-առաջարկ:

Ատենախոսության շարադրանքում հանդիպել եմ մի քանի վրիպակների, որոնք առանձին կներկայացվեն ատենախոսին հետագա տպագրություններում դրանք շտկելու համար:

Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսի հրապարակված անգլերեն լեզվով հոդվածները լինեին ավելի շատ, քանի որ նյութը շատ հետաքրքիր է և պարունակում է գիտական նորույթ, ուստի ցանկալի կլիներ նյութը հասցնելու նաև արտասահմանյան համապատասխան մասնագետներին:

Ունեմ փոքրիկ նկատառում կապված ատենախոսության վերնագրում և տեքստում հանդիպող «սովորողներ» բառի հետ. այն ներդաշնակ չի ընկալվում և, կարծես թե տեղին չի կիրառվում լեզվաբանական առումով, կարծում եմ անհրաժեշտ կլիներ «սովորողներ» բառը փոխարինել մեկ այլ համարժեք բառով:

Ցանկալի կլիներ ուսումնասիրել, ինչպես նաև նյութում ընդգրկել արտասահմանյան բուհերում ներդրված նմանօրինակ կրթական ծրագրերը:

Ցանկանում եմ ավելացնել նաև, որ նշված դիտողություններն ու առաջարկները, չեն խանգարում հավաստել, որ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի "գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում" պայմանին, իսկ ատենախոսության հեղինակ ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆՆ արժանի է ԺԳ.00.02 - Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ 020 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ՝

Մարտին ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մարտին Հարությունյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար,

արվեստագիտության թեկնածու՝

Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ

02 մայիս 2024թ.